ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
АРМЯНСКАЯ АССОЦИАЦИЯ ДЕТСКИХ ВРАЧЕЙ
ARMENIAN PEDIATRIC ASSOCIATION

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 / 2026

«Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա» (ՄԲՀԱ) ՀԿ–ն ստեղծվել է 2007թ.՝ միավորելով երեխաների առողջության ոլորտում աշխատող տարբեր մասնագետներին: Ասոցիացիայի խորհրդում ներկայացված են առաջատար մանկաբույժներ, մանկական վիրաբույժներ և նեղ մասնագետներ, երեխաների և դեռահասների ոլորտում գործող առողջապահության կազմակերպիչներ, բժշկական համալսարանի դասախոսներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ասոցիացիայի գործունեությունն ուղղված է Հայաստանում երեխաների ֆ դեռահասների առողջության ֆ զարգացման հիմնախնդիրների լուծմանը հետևյալ ուղղություններով.

- **աջակցություն որակյալ բուժօգնության կազմակերպմանը ֆ տրամադրմանը,**
- **աջակցություն ուղեցույցների ֆ այլ օժանդակ նյութերի մշակմանը,**
- **բուժանձնակազմի շարունակական բժշկական կրթություն,**
- **աջակցություն երեխաների ֆ դեռահասների առողջության ոլորտին առնչվող ազգային քաղաքականության մշակմանը, շահերի պաշտպանություն**
- **մանկաբուժական ոլորտում գիտական հետազոտությունների, վերլուծական աշխատանքերի, դիտարկումների խրախուսում,**
- **միջազգային համագործակցության իրականացում:**

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

✓ Մանկաբուժական ազգային կոնֆերանսներ (միջազգային մասնակցությամբ)

Խոշոր մանկաբուժական գիտաժողովներ՝ միջազգային մասնակցությամբ իրականացվել են 2008, 2010, 2012, 2014, 2016, 2018, 2021, այնուհետ՝ տարեկան: Կոնֆերանսներին մշտական աջակցություն են ցուցաբերել ՀՀ Առողջապահության նախարարությունը, Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարանը, Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոցը, Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցը և այլ գործընկերներ: Յուրաքանչյուր կոնֆերանսին մասնակցել է 300-400 մանկաբույժ, ընտանեկան բժիշկ, նեոնատոլոգ, մանկական վիրաբույժ և մանկական այլ նեղ մասնագետներ Հայաստանի բոլոր մարզերից, Արցախից: Կոնֆերանսի բանախոսների շարքում են Հայաստանի և արտերկրյա առաջատար մասնագետներ (Շվեյցարիայից, Ավստրիայից, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայից, Դանիայից, Ֆինլանդիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Վրաստանից և այլ երկրներից): Կոնֆերանսների ծրագիրը հաստատվում է ԱՆ կողմից, մասնակիցներին տրամադրվում են ՇՄԶ կրեդիտներ:



2021-ից ի վեր Մանկաբուժական կոնֆերանսներն անցկացվում են ամեն տարի, Հայկական ակնաբուժության նախագծի և Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի (ԼԱՄՀ) հետ համագործակցությամբ (առկա և առցանց եղանակով), ԱՄՆ առաջատար մանկական դասախոսների և մասնագետների մասնակցությամբ:

2025թ.-ի սեպտեմբերի 19-20-ին անցկացված կոնֆերանսին մասնակցեցին ավելի քան 400 մանկական և ընտանեկան բժիշկներ, մանկական նեղ մասնագետներ Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: ԱՄՆ-ի պրոֆեսորները, Վրաստանի կենտրոնական մանկական հիվանդանոցի մանկաբույժները և Հայաստանի առաջատար բժիշկները զեկուցումներ ներկայացրեցին մանկաբուժության և մանկական հիվանդությունների արդիական թեմաներով, քննարկվեցին ուշագրավ կլինիկական դեպքեր: Կոնֆերանսի հատուկ հյուրն էր «Կայզեր Պերմանենտե» Զարգացման-վարքագծային մանկաբույժ Թամար Նազերիան-Չորբաջյանը, որը ներկայացրեց «Վաղ հասակի երեխայի բարեկեցության հարցում» զարգացման սքրինինգային գործիքը: Մասնակիցները ստացան վկայականներ՝ 9 ՇՄԶ կրեդիտներով:

✓ **Մանկաբուժական դպրոցներ, այլ ՇՄԶ միջոցառումներ մանկաբուժության ոլորտում**

Մանկաբուժական դպրոցն անցկացվում է տարեկան կտրվածքով, 2008թ.–ից ի վեր: Ավանդույթ դարձած այս կրթական միջոցառմանը մասնակցում են հարյուրավոր մանկական և ընտանեկան բժիշկներ Երևանից և ՀՀ մարզերից՝ հնարավորություն ստանալով ուսումնասիրելու մանկաբուժության առավել արդիական հարցերին նվիրված դասախոսություններ, որոնք ներկայացվում են հայաստանցի և արտերկրից հրավիրված առաջատար մանկական մասնագետների կողմից:

2025թ.-ի հունիսի 7-ին անցկացված մանկաբուժական դպրոցին դասախոսությամբ հանդես եկավ գաստրոէնտերոլոգ Թբիլիսիի կենտրոնական մանկական հիվանդանոցից՝ հազվագյուտ

հիվանդության վերաբերյալ զեկուցումով: Դասընթացին մասնակցեցին ավելի քան 160 մանկական և ընտանեկան բժիշկներ ՀՀ բոլոր մարզերից:

Համագործակցելով «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ի և առաջատար մանկական այլ բուժհաստատությունների հետ՝ ասոցիացիան ամեն տարի իրականացնում է տարբեր թեմատիկ ուսուցողական միջոցառումներ, որոնք հավաստագրվում են ՀՀ ԱՆ կողմից:

2025թ. մարտի 18-ին «Արաբկիր» ԲՀ ռևմատոլոգիական ծառայության հետ համատեղ անցկացվեց Մանկական ռևմատոլոգիական միջազգային օրվան նվիրված կոնֆերանս:

2025թ.-ի ապրիլի 11-ին Արաբկիր ԲՀ-ի և Սթոնի Բրուք համալսարանի բժշկական դպրոցի հետ համատեղ անցկացվեց «Մանկահասակ բուժառուների միջմասնագիտական խնամքը» սիմպոզիում:
Բոլոր անցկացված կրթական միջոցառումները կրեդիտավորվել են (յուրաքանչյուրը 2-5 կրեդիտ): Կրթական միջոցառումներին մասնակցեցին հարյուրավոր մանկաբույժներ, մանկական և ընտանեկան բժիշկներ Երևանից և ՀՀ տարբեր մարզերից:

- ✓ **Միջազգային գործունեություն ֆ նպատակային ծրագրեր.**

2021թ.-ից Հայկական ակնաբուժության նախագծի և Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի (CHLA) հետ համագործակցությամբ նախաձեռնվեց հայ մանկաբույժների և ընտանեկան բժիշկների համար **առցանց շարունակական մանկաբուժական կրթության ծրագիրը (**https://learnwithopen.org/): Ծրագրի շրջանակներում հայ և ամերիկացի առաջատար մանկական բժիշկների կողմից մշակվում են մանկաբուժության արդիական թեմաներով առցանց ուսուցողական դասընթացների նյութեր, փոդքասթեր, մանկաբուժական նորություններ արծարծող տեղեկագրեր (OPEN-ը մեկ որպեում): Մասնակցելով նշված կթական միջոցառումներին՝ մանկական և ընտանեկան բժիշկները ստանում են նորագույն ապացուցահեն բժշկագիտական տեղեկատվություն և ձեռք են բերում ինքնակրթության ՇՄԶ կրեդիտներ:

«Առցանց մանկաբուժական կրթություն» ծրագրի շրջանակներում 2021-2025թթ. ԱՄՆ մասնագետների հետ համատեղ պատրաստվեցին և տարածվեցին 46 հատ մանկաբուժական տեղեկագրեր (OPEN-ը մեկ որպեում), ավելի քան 45 էլեկտրոնային ուսուցման նյութեր, որոնք կրեդիտավորվեցին ԱՆ կողմից: Learnwithopen հարթակում տեղադրվեցին նաև ամերիկացի և տեղացի առաջատար մանկաբույժների և մանկական մասնագետների՝ կոնֆերանսների զեկուցումների տեսագրությունները:





2025թ.-ին Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ, Լոս Անջելեսի մանկական և Կայզեր Պերմանենտե հիվանդանոցների հետ համագործակցության իրագործվեց ծրագիր՝ ուղղված ՀՀ-ում 0-5 տարեկան երեխայի զարգացման և բարեկեցության նոր սքրինինգային գործիքի փորձարկմանը և ներդրմանը (www.TheSWYC.org): Մշակվեց վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ տեսական և գործնական ուսուցմամբ, ուսումնական նյութերի ամբողջական փաթեթ,

անցկացվեցին վերապատրաստումներ 3 ընտրված ԱԱՊ հաստատությունների բուժանձնակազմի համար, որոնք կիրառեցին գործիքը իրենց տեղամասերում՝ երեխաների սքրինինգի նպատակով: Հետազոտության տվյալները թույլ տվեցին գնահատել ԱԱՊ օղակի համար նոր սքրինինգային գործիքի կիրառման հնարավորությունը, համեմատել տվյալները Այրտոնի գործիքի հետ:
Արդյունքները ներկայացվել են և քննարկվել շահագրգիռ մասնագետների հետ ս/թ սեպտեմբերի 16-ին անցկացված կլոր սեղանին, որին մասնակցել են Լոս Անջելեսի առաջատար մանկաբույժները, ԱՆ Մոր և մանկան առողջության պահպանման վարչության, Երևանի մի քանի ԱԱՊ հաստատությունների ներկայացուցիչներ: Զեկույցը և հաշվետվությունը ներկայացվեց ՀՀ ԱՆ՝ ազգային մակարդակում հետագա ներդրման նպատակով:

Սկսած 2007թ.-ից Ասոցիացիան որպես լիիրավ անդամ մասնակցում է Եվրոպական մանկաբուժական ասոցիացիայի, Մանկաբուժական միությունների Եվրոպական ակադեմիայի, ինչպես նաև Համաշխարհային մանկաբուժական ասոցիացիայի աշխատանքներին,

Միջազգային և Եվրոպական Գլխավոր ասամբլեաներին, ընդհանուր քաղաքանության մշակմանը, ընտրություններին, իրագործվող միջազգային ուսումնասիրություններին:

- ✓ **Մասնակցութուն երեխաների ֆ դեռահասների առողջության ոլորտում քաղաքականության մշակմանը.**

Ասոցիացիան ակտիվ ներգրավված է ՀՀ մանկաբուժության ոլորտում քաղաքականության, ռազմավարական ծրագրերի, ուսումնասիրությունների և գործելակարգերի մշակման գործընթացներում: Ասոցիացիան ներկայացված է ՀՀ Առողջապահության նախարարին կից գործող հանրային խորհրդի կազմում, ՄԲՀԱ նախագահը՝ Հայկական բժշկական ասոցիացիայի խորհրդի անդամ է:

Սկսվել և շարունակվելու է ասոցիացիայի կազմում նեղ մասնագիտական խմբերի ստեղծումը՝ ոլորտի մասնագետների համախմբման, խնդիրների ուսումնասիրման և արձագանքման նպատակով: Կայացել է մանկական գաստրոէնտերոլոգիական և հեպատոլոգիական սեկցիայի նիստը, քննարկվել և խթանվել է համագործակցությունը Գաստրոէնտերոլոգիայի, հեպատոլոգիայի և նուտրիցիոլոգիայի Եվրոպական միության (ESPGHAN) հետ:

Գործում է Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի խումբ ֆեյսբուքում՝ բժշկական նորությունների տարածման նպատակով:
——

2025թ. հոկտեմբերի 31-ին առցանց կայացավ Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի ժողովը, որի ընթացքում քննարկվեցին մի շարք արդիական բովանդակային և կազմակերպչական հարցեր:
Մասնավորապես, ներկայացվեց տարբեր հիվանդանոցների մասնագետների կողմից մշակված երեխաների վերակենդանացման միջոցառումների և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակների նորացված ցանկը: Փաստաթուղթը արժանացավ հավանության և ներկայացվեց ՀՀ ԱՆ:

Ներկայացվեց Ասոցիացիայի 2021-2025թթ. գործունեության հաշվետվությունը, քննարկվեցին աշխատանքի բարելավման ուղիները, ներառյալ նեղ մասնագիտացված միավորումների (սեկցիաների) ստեղծումը, երիտասարդ բժիշկների առավել ակտիվ ներգրավումը, անդամավճարների հավանական ներմուծումը, ՀՀ ԱՆ հետ համագործակցությունը և մի շարք այլ հարցեր:

Տեղի ունեցած ընտրությունների արդյունքում Ասոցիացիայի նախագահ ընտրվեց Արաբկիր ԲՀ-ի Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի ղեկավար, ԵՊԲՀ Մանկաբուժության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԱՆ խորհրդատու մանկաբուժության գծով Սերգեյ Գերասիմի Սարգսյանը:

- ✓ **Մեր գործընկերները**

ՄԲՀԱ գործունեությանը աջակցում են մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններ, ներառյալ «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ, առաջատար մանկական բուժհաստատություններ, Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան, Ցյուրիխի համալսարանական մանկական

հիվանդանոցը, Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցը, Հայկական ակնաբուժության նախագիծ հիմնադրամը, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, այլ գործընկերներ:

✓ Կոնտակտներ

Ասոցիացիայի նախագահ՝ Սերգեյ Գերասիմի Սարգսյան
Տնօրեն՝ Եվա Մովսեսյան
Քարտուղար՝ Նաիրա Շահվերդյան:

Հասցե՝
Մամիկոնյանց փ. 30, ք.Երևան, 0014
Հեռ.՝+374 10 236030; Fax: +374 10 284170
Էլ.փոստ՝ armpa@yandex.com
FB խումբ՝ https://www.facebook.com/groups/444730073208241